

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2011 թ. մարտի 9-11-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագիր» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011 թ. մարտի 14-17-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը մասնակցել են ք. Աստանայում (Ղազախստան) կայացած «Կարճաժամկետ վիճակագրության և սեզոնային ճշգրտումներ» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011 թ. մարտի 23-25-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների ծրագրով ներդրումային ապրանք ներկայացուցիչների ցանկի համաձայնեցում» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. մարտի 24-25-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ անդամ-երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 45-րդ նիստին,
- ✓ 2011 թ. մարտի 28-31-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մարտիրոսյանը և առաջին կարգի մասնագետ և Կ. Եսայանը մասնակցել են ք. Նյու Դելիյում (Հնդկաստան) կայացած ԴԵՎԻՆՖՈ-ի ընդլայնված ուսուցմանը,
- ✓ 2011 թ. ապրիլի 6-7-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Սեուլում (Կորեա) կայացած «Սոցիալական պաշտպանության ինդեքսի արդիականացում և կատարելագործում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2011 թ. ապրիլի 11-15-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը և գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Վ. Ճաղարյանը մասնակցել են ք. Անկարայում (Թուրքիա) կայացած «Սեռային բաշխմամբ տվյալները գյուղատնտեսությունում և գյուղական բնակավայրերի զարգացման գործում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011 թ. ապրիլի 19-20-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Աղքատության մոնիթորինգի վերաբերյալ փորձի փոխանակում» թեմայով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011 թ. ապրիլի 21-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Դուշանբեում (Տաջիկստանի Հանրապետություն) կայացած «Մարդահամարի նյութերի մշակման փորձի փոխանակում և ABBYY համակարգ» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. ապրիլի 27-29-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) «Կանանց դեմ բռնությունների չափման վերաբերյալ» նթատարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը: